Հավելված N 2
ՀՀ կառավարության 2026 թվականի
հոկտեմբերի 29-ի N 1577 - Ն որոշման

ԿԱՐԳ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Սույն հավելվածում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

1) փորձաքննության մարմին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օրենքով սահմանված կարգով հաշվառված իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված կարգով ներկայացրել և հաշվառվել է «ապրանքի ծագման երկրի որոշման փորձաքննության գործունեություն» իրականացնելու վերաբերյալ ծանուց-մամբ և համապատասխանում է սույն կարգով սահմանված պահանջներին.

2) փորձագետ՝ սույն կարգով սահմանված որակավորման պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ, որն իրականացնում է ապրանքի ծագման փորձաքննություն, գնահատում է ներկայացված փաստաթղթերը և այլ ապացույց-ները, ինչպես նաև կազմում է փորձաքննության ակտ.

3) շահերի բախում՝ հանձնաժողովի անդամի կամ փորձագետի անձնական, ֆինանսական կամ այլ շահագրգռվածության այնպիսի իրավիճակ, որը կարող է ազդել նրա կողմից սույն կարգով նախատեսված գործառույթների իրականացման անաչառության և օբյեկտիվության վրա:

2. Փորձաքննության մարմինը գնահատում է միայն այն հանգամանքները, որոնք անհրաժեշտ են ապրանքի ծագման որոշման համար, և յուրաքանչյուր եզրա-կացություն հիմնավորում է համապատասխան ապացույցներով:

3. Փորձաքննության մարմինը պարտավոր է պահպանել փորձաքննության ընթացքում ստացված առևտրային, արտադրական, ֆինանսական և այլ գաղտնի տեղեկատվության գաղտնիությունը:

4. Փորձաքննության մարմինը պարտավոր է ապահովել փորձաքննության ամբողջ գործընթացի փաստաթղթավորումը և հետագծելիությունը:

5. Փորձաքննության իրականացման հետ կապված դիմումը, ներկայացված փաստաթղթերը և տեղեկությունները, փորձաքննության նյութերը, այդ թվում՝ տեղում ուսումնասիրության արձանագրությունը, փորձաքննության ակտը և դրան առնչվող այլ փաստաթղթեր, պահվում են փորձաքննության մարմնի կողմից՝ տվյալ ապրանքի նկատմամբ կիրառելի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Եվրասիական տնտեսական միության իրավունքը կազմող ակտերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում, իսկ պահպանման ժամկետ սահմանված չլինելու դեպքում՝ առնվազն 3 տարի:

6. Փորձաքննության մարմինը պարտավոր է ապահովել փորձագետների անկախության, անաչառության և գաղտնիության պահանջների պահպանումը փորձաքննության բոլոր փուլերում, այդ թվում՝ ձեռնարկելով անհրաժեշտ միջոցներ շահերի բախման դեպքերի բացահայտման և կանխարգելման, փորձագետների անկախության և անաչառության ապահովման, ինչպես նաև փորձաքննության ընթացքում ստացված տեղեկությունների գաղտնիության պահպանման և չարտոնված բացահայտումը կանխելու նպատակով:

7. Ապրանքի ծագման որոշման ժամանակ փորձաքննության մարմնի կողմից կիրառվող հետևյալ մեթոդներն են՝

1) փաստաթղթային ուսումնասիրություն.
2) արտադրական գործընթացի վերլուծություն.
3) ծախսային կառուցվածքի գնահատում.
4) հումքի և բաղադրիչների հետագծելիության ստուգում.
5) տեղում ուսումնասիրություն:

8. Սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված մեթոդներն ընտրվում են՝ հաշվի առնելով ապրանքի բնույթը, արտադրական գործընթացի բարդությունը և ապրանքի ծագման որոշման հետ կապված ռիսկի մակարդակը: Փորձաքննության մարմինը ռիսկի մակարդակը որոշում է սույն հավելվածի 9-րդ կետով սահմանված չափանիշների հիման վրա և կիրառում հետևյալ մոտեցումները՝

1) ցածր ռիսկի դեպքում՝ ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների փաստաթղթային ուսումնասիրություն.

2) միջին ռիսկի դեպքում՝ լրացուցիչ փաստաթղթերի և տեղեկությունների պահանջում և դրանց ուսումնասիրություն, ինչպես նաև, ըստ անհրաժեշտության, արտադրական գործընթացի վերլուծություն կամ հումքի և բաղադրիչների հետագծելիության ստուգում.

3) բարձր ռիսկի դեպքում՝ ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների, արտադրական գործընթացի, ծախսային կառուցվածքի, հումքի և բաղադրիչների հետագծելիության համալիր ուսումնասիրություն, որը, ըստ անհրաժեշտության, ներառում է նաև արտադրության վայրի տեղում ուսումնասիրություն:

9. Ռիսկի մակարդակը որոշվում է փորձաքննության մարմնի կողմից՝ հաշվի առնելով հետևյալ չափանիշները՝

1) ապրանքի ծագման որոշման բարդությունը.

2) արտադրական գործընթացի առանձնահատկությունները և բարդությունը.

3) ներկայացված փաստաթղթերի և տեղեկությունների ամբողջականությունն ու հավաստիությունը.

4) ապրանքի ծագման չափանիշի պահպանվածությունը պարզելու համար լրացուցիչ փաստաթղթեր պահանջելու կամ արտադրական գործընթացի կամ արտադրության վայրի տեղում ուսումնասիրություն իրականացնելու անհրաժեշտությունը:

10. Փորձաքննության մարմինը պետք է ունենա՝

1) սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանող փորձագետներ, որոնք իրականացնում են ապրանքի ծագման փորձաքննությունը և դրա

արդյունքների հիման վրա կազմում փորձաքննության ակտը: Փորձաքննության մարմինը փորձագետների կազմում կամ նրանց իրավասությունների շրջանակում փոփոխություն կատարելու դեպքում փոփոխությունը կատարելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է լիազոր մարմնին.

2) փորձաքննության արդյունքների գրանցման, պահպանման և հետագծելիության ապահովման համակարգ, որը փորձաքննության մարմնի կողմից կիրառվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Փորձաքննության մարմինը պարտավոր է լիազոր մարմնի պահանջով տրամադրել փորձաքննության արդյունքները և դրանց վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը.

3) փորձագետի անկախության և անաչառության ապահովման մեխանիզմներ, այդ թվում՝ շահերի բախման դեպքերի բացահայտման և նման դեպքերում փորձագետի փոխարինման հնարավորություն.

4) իրականացված փորձաքննության արդյունքների նկատմամբ ներքին որակի վերահսկողության մեխանիզմներ.

5) դիմողների կողմից ներկայացված դիմում-բողոքների և առարկությունների ընդունման և քննության ներքին ընթացակարգ, որով սահմանվում են դիմում-բողոքների և առարկությունների ներկայացման, գրանցման և քննության կարգը և ժամկետները, ինչպես նաև դրանց քննության արդյունքով փորձաքննության արդյունքն անփոփոխ թողնելու, վերանայելու կամ կրկնակի փորձաքննություն իրականացնելու հիմքերը և կարգը՝ ապահովելով, որ դիմում-բողոքը կամ առարկությունը քննվի վիճարկվող փորձաքննության իրականացմանը չմասնակցած անձի կողմից:

11. Փորձաքննության մարմինը պարտավոր է լիազոր մարմնի պահանջով՝ պահանջում նշված ժամկետում ներկայացնել իր գործունեության, իրականացված փորձաքննությունների, տրամադրված փորձաքննության ակտերի, փորձագետների գործունեության և փորձաքննությունների արդյունքների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններն ու փաստաթղթերը: Միաժամանակ փորձաքննության մարմինը «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված

կարգով ծանուցումը ստանալուց հետո 10-օրյա ժամկետում լիազոր մարմնին է ներկայացնում՝

1) սույն հավելվածի 10-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված փորձագետների վերաբերյալ տեղեկությունները՝ նրանց որակավորումը հավաստող փաստաթղթերով.

2) սույն հավելվածի 10-րդ կետի 2-5-րդ ենթակետերով նախատեսված համակարգերի, մեխանիզմների և ներքին ընթացակարգերի վերաբերյալ տեղեկությունները և դրանք հավաստող փաստաթղթերը:

12. Լիազոր մարմինը սույն կարգով նախատեսված տեղեկությունների և փաստաթղթերի հիման վրա ուսումնասիրում է փորձաքննության մարմնի գործունեության համապատասխանությունը սույն կարգով և փորձաքննություն իրականացնող գործունեությունը կարգավորող այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին: Ուսումնասիրությունն իրականացվում է լիազոր մարմնին ներկայացված կամ օրենքով սահմանված կարգով հասանելի տեղեկությունների և փաստաթղթերի շրջանակներում, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ: Համապատասխան պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում լիազոր մարմինն իր իրավասության շրջանակում և «Գործունեության իրականացման ծանուցման մասին» օրենքով սահմանված հիմքերի ու կարգի համաձայն ձեռնարկում է համապատասխան միջոցներ:

13. Փորձագետի մասնագիտական որակավորումը, տվյալ ոլորտում մասնագիտական կոմպետենտության գնահատումը և համապատասխան որակավորման վկայականի (սերտիֆիկատի) տրամադրումն իրականացվում են ԳՕՍՏ ԻՍՕ/ԻԷԿ 17024 ստանդարտի պահանջներին համապատասխան հավատարմագրված անձանց սերտիֆիկացման մարմնի կողմից՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

14. Հավատարմագրման ազգային մարմնի կողմից «Հավատարմագրման մասին» օրենքով սահմանված կարգով հավատարմագրված համապատասխանության գնահատման մարմնի՝ ապրանքի ծագման վերաբերյալ փորձաքննության

իրականացմանը ներգրավված և հավատարմագրման շրջանակում մասնագիտական կարողությունները գնահատված անձնակազմի համար սույն կարգով որակավորման ընթացքում հաշվի են առնվում հավատարմագրման շրջանակում գնահատված մասնագիտական կարողությունները: Այդ անձանց համար սույն կարգով ստուգվում են միայն ապրանքի ծագման որոշման վերաբերյալ մասնագիտական գիտելիքներն ու կարողությունները:

15. Ապրանքի ծագման վերաբերյալ փորձաքննությունն իրականացվում է միայն սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխանող և օրենքով սահմանված կարգով ծանուցված փորձաքննության մարմնի կողմից՝ համապատասխան որակավորում ունեցող փորձագետի միջոցով: Ֆիզիկական անձի կողմից սույն կարգով սահմանված որակավորում ունենալը ինքնին հիմք չէ ապրանքի ծագման վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու համար:

16. Փորձագետի որակավորման գործընթացն իրականացվում է դիմումի հիման վրա՝ համաձայն N 6 ձևի, որը ներառում է՝

1) փաստաթղթերի ընդունում և ուսումնասիրություն.

2) թեկնածուի՝ սահմանված պահանջներին համապատասխանության ստուգում.

3) թեստավորման փուլ.

4) բանավոր քննության փուլ.

5) արդյունքների ամփոփում.

6) որակավորման վերաբերյալ որոշման ընդունում.

7) որակավորման վկայականի (սերտիֆիկատի) տրամադրում:

17. Փորձագետների որակավորումն իրականացվում է սույն կարգով սահմանված պահանջներին և GOUS ԻՍՕ/ԻԷԿ 17024 ստանդարտի պահանջներին համապատասխան:

18. Որակավորման գործընթացն իրականացնող սերտիֆիկացման մարմինը, սույն կարգով և GOUS ԻՍՕ/ԻԷԿ 17024 ստանդարտով սահմանված պահանջների շրջանակում նախապես մշակում, հաստատում և հրապարակում է որակավորման

գործընթացի իրականացման համար անհրաժեշտ սերտիֆիկացման սխեման և դրան համապատասխան՝

1) որակավորման գործընթացի կազմակերպման և իրականացման կարգը.

2) թեկնածուների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը, դրանց ներկայացման ձևը և ժամկետները.

3) թեստավորման և բանավոր քննության անցկացման ընթացակարգը.

4) գնահատման և քննության արդյունքների արձանագրման ընթացակարգը.

5) որակավորման արդյունքների վերաբերյալ որոշումների կայացման և դրանց մասին թեկնածուին տեղեկացնելու կարգը.

6) որակավորման վկայականի (սերտիֆիկատի) տրամադրման, կասեցման, դադարեցման և վերահաստատման ընթացակարգերը.

7) դիմում-բողոքների և բողոքարկումների քննության ընթացակարգը.

8) որակավորման գործընթացի վերաբերյալ այլ կազմակերպական և տեխնիկական հարցեր:

19. Փորձագետը պետք է ունենա բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթություն՝ ապրանքագիտության, մաքսային գործի, տնտեսագիտության, արտադրության տեխնոլոգիայի կամ համապատասխան ապրանքախմբի ոլորտում, ինչպես նաև մասնագիտական գիտելիքներ՝ ապրանքների ծագման կանոնների, մաքսային կարգավորման, արտադրական գործընթացների և ապրանքի ծագումը հիմնավորող փաստաթղթերի ուսումնասիրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Եվրասիական տնտեսական միության իրավունքը կազմող ակտերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ծագման կանոնները և առևտրային ռեժիմով նախատեսված պահանջների վերաբերյալ:

20. Փորձագետի որակավորման գնահատման թեստային փուլում ստուգվում են նրա մասնագիտական և իրավական գիտելիքները:

21. Թեստային առաջադրանքները կազմվում են նախապես հաստատված հարցերի բազայի հիման վրա:

22. Թեստը բաղկացած է 50 թեստային առաջադրանքից, որոնք հարցերի բազայից ընտրվում են պատահականության սկզբունքով:

23. Թեստային առաջադրանքներից յուրաքանչյուր ճիշտ պատասխանը գնահատվում է մեկ միավորով:

24. Թեստային փուլի առավելագույն գնահատականը 50 միավոր է:

25. Թեստային փուլը հաղթահարված է համարվում, եթե մասնագետը հավաքել է առնվազն 40 միավոր:

26. 40 միավորից պակաս արդյունքի դեպքում մասնագետը չի մասնակցում բանավոր գնահատման փուլին:

27. Թեստի արդյունքները արձանագրվում են՝ ապահովելով գնահատման արդյունքների հետագծելիությունը:

28. Բանավոր գնահատման փուլում ստուգվում են մասնագետի մասնագիտական գիտելիքները, դրանք կիրառելու կարողությունները և մասնագիտական իրավիճակներում հիմնավորված որոշումներ և եզրահանգումներ կատարելու կարողությունը:

29. Բանավոր գնահատումն իրականացվում է նախապես հաստատված հարցերի և իրավիճակային խնդիրների բազայի հիման վրա:

30. Յուրաքանչյուր մասնագետի տրվում է 10 հարց, որոնք ընտրվում են հարցաշարում ներառված հարցերից՝ պատահական ընտրության միջոցով:

31. Բանավոր հարցերից յուրաքանչյուրը գնահատվում է 0-3 միավորով:

32. Բանավոր փուլի առավելագույն գնահատականը 30 միավոր է:

33. Բանավոր փուլը հաղթահարված է համարվում, եթե մասնագետը հավաքել է առնվազն 24 միավոր:

34. Մասնագետի որակավորման գնահատման առավելագույն արդյունքը կազմում է 80 միավոր, որից՝

1) թեստային փուլ՝ 50 միավոր.

2) բանավոր գնահատման փուլ՝ 30 միավոր:

35. Թեստավորման և բանավոր քննության արդյունքների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որում նշվում են թեկնածուի ստացած միավորները՝ ըստ գնահատման փուլերի, ինչպես նաև գնահատման վերջնական արդյունքը:

36. Թեստավորման և բանավոր քննության արդյունքների գնահատումն իրականացվում է հանձնաժողովի կողմից, իսկ որակավորման վկայական (սերտիֆիկատ) տրամադրելու կամ չտրամադրելու, որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը կասեցնելու, վերականգնելու կամ դադարեցնելու, վերասերտիֆիկացնելու վերաբերյալ որոշումը՝ սերտիֆիկացման մարմնի կողմից:

37. Հանձնաժողովը կազմված է առնվազն հինգ անդամից:

38. Հանձնաժողովի կազմում ընդգրկվում են՝

1) սերտիֆիկացման մարմնի ներկայացուցիչ.

2) լիազոր մարմնի ներկայացուցիչ.

3) Պետական եկամուտների կոմիտեի ներկայացուցիչ.

4) համապատասխան ոլորտի մասնագետներ:

39. Լիազոր մարմնի ներկայացուցիչը հանձնաժողովի կազմում ընդգրկվում է տվյալ ոլորտում փորձագետների որակավորման գործընթացի՝ օրենսդրական և ոլորտային պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

40. Հանձնաժողովի նախագահին նշանակում է սերտիֆիկացման մարմինը՝ հանձնաժողովի անդամների կազմից, իսկ նախագահի տեղակալին նշանակում է հանձնաժողովի նախագահը՝ հանձնաժողովի անդամներից: Հանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա կողմից իր լիազորությունների իրականացման անհնարինության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է նախագահի տեղակալը:

41. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է հանձնաժողովի անդամների կեսից ավելին:

42. Հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել թեկնածուի գնահատմանը, եթե առկա է շահերի բախում կամ այլ հանգամանք, որը կարող է կասկածի տակ դնել նրա անաչառությունը:

43. Թեկնածուն համարվում է համապատասխան որակավորում ստացած, եթե՝

1) բավարարել է փաստաթղթերով սահմանված պահանջներին.

2) հաղթահարել է թեստավորման և բանավոր քննության փուլերը՝ սույն կարգի 25-րդ և 33-րդ կետերով սահմանված նվազագույն գնահատականներին համապատասխան:

44. Հանձնաժողովը որակավորման գործընթացի ավարտից հետո կազմում է եզրակացություն, որում նշվում են՝

1) թեկնածուի անունը, ազգանունը, հայրանունը (առկայության դեպքում) և նույնականացման համար անհրաժեշտ տվյալները.

2) որակավորման ոլորտը.

3) թեստավորման արդյունքը.

4) բանավոր քննության արդյունքը.

5) ընդհանուր գնահատականը.

6) թեկնածուին որակավորում տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ առաջարկությունը:

45. Սերտիֆիկացման մարմինը հանձնաժողովի եզրակացության հիման վրա կայացնում է որոշում որակավորման վկայական (սերտիֆիկատ) տրամադրելու կամ չտրամադրելու վերաբերյալ:

46. Որակավորման գործընթացը հաջողությամբ անցած անձին սերտիֆիկացման մարմինը տրամադրում է փորձագետի որակավորման վկայական (սերտիֆիկատ) 5 տարի ժամկետով: Սերտիֆիկատը գործողության մեջ մտնելուց հետո սերտիֆիկացման մարմնի կողմից 2 տարին մեկ անգամ իրականացվում է փորձագետի համապատասխանության հսկողություն՝ համաձայն սերտիֆիկացման մարմնի կողմից հաստատված ընթացակարգի:

47. Որակավորման վկայականում (սերտիֆիկատում) նշվում են՝

1) փորձագետի անունը, ազգանունը.

2) որակավորման ոլորտը.

3) փորձագետի իրավասության շրջանակը.

4) որակավորման վկայականի (սերտիֆիկատի) համարը.

5) տրամադրման ամսաթիվը.

6) գործողության ժամկետը.

7) սերտիֆիկացման մարմնի անվանումը.

8) սերտիֆիկացման սխեմայի, ստանդարտի կամ համապատասխան այլ փաստաթղթերի վկայակոչումները:

48. Փորձաքննության մարմինը փորձագետ կարող է ներգրավել կամ նշանակել միայն այն անձին, որն ունի տվյալ փորձաքննության ոլորտին և իրավասության շրջանակին համապատասխան գործող որակավորման վկայական (սերտիֆիկատ):

49. Փորձագետը պարտավոր է փորձաքննությունն իրականացնել անկախության, անաչառության, օբյեկտիվության, մասնագիտական կոմպետենտության, գաղտնիության և ապացույցների հետագծելիության սկզբունքների պահպանմամբ:

50. Փորձագետի որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը կասեցվում կամ դադարեցվում է որակավորման վկայական (սերտիֆիկատ) տրամադրած սերտիֆիկացման մարմնի կողմից հանձնաժողովի եզրակացության հիման վրա հետևյալ հիմքերով՝

1) որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը կասեցվում է՝

ա. փորձագետի կողմից փորձաքննության իրականացման ընթացքում շահերի բախման հետևանքով անկախության կամ անաչառության պահանջները խախտելու դեպքում,

բ. փորձագետի կողմից փորձաքննության իրականացման ընթացքում շահերի բախման առկայության մասին չհայտնելու դեպքում,

գ. սույն կարգի 49-րդ կետով սահմանված՝ փորձագետի պարտականությունների այնպիսի խախտման դեպքում, որը ազդում է փորձաքննության արդյունքների հիմնավորվածության, օբյեկտիվության կամ հետագծելիության վրա.

2) որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը դադարեցվում է՝

ա. փորձագետի կողմից որակավորում ստանալու համար կեղծ կամ ոչ հավաստի տեղեկություններ կամ փաստաթղթեր ներկայացնելու դեպքում,

բ. փորձագետի կողմից փորձաքննության արդյունքները կեղծելու դեպքում,

գ. փորձագետի կողմից որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողության կասեցման ընթացքում փորձագիտական գործունեություն իրականացնելու դեպքում,

դ. սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքերով որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողության կասեցման հիմքը սույն հավելվածի 51-րդ կետով սահմանված ժամկետում չվերացնելու դեպքում:

51. Սույն հավելվածի 50-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքերով որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը կասեցնելու վերաբերյալ որոշմամբ նշվում են կասեցման հիմքը, այն վերացնելու համար փորձագետի կողմից կատարման ենթակա գործողությունները և դրանց կատարման ժամկետը: Որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը կասեցվում է մինչև կասեցման հիմքի վերացումը, բայց ոչ ավելի, քան 3 ամիս ժամկետով:

52. Փորձագետը կասեցման հիմքը վերացնելուց հետո սերտիֆիկացման մարմին է ներկայացնում համապատասխան գործողությունների կատարումը հավաստող փաստաթղթերը: Փորձագետի կողմից փաստաթղթերը ներկայացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում սերտիֆիկացման մարմինը հանձնաժողովի եզրակացության հիման վրա որոշում է ընդունում որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողությունը վերականգնելու կամ դադարեցնելու վերաբերյալ:

53. Որակավորման վկայականի (սերտիֆիկատի) գործողության կասեցման, վերականգնման կամ դադարեցման մասին տեղեկությունը սերտիֆիկացման մարմնի կողմից տրամադրվում է փորձաքննության մարմնին և լիազոր մարմնին 1 աշխատանքային օրվա ընթացքում:

54. Մասնագետի որակավորման գնահատման արդյունքները մասնակիցը կարող է բողոքարկել արդյունքների մասին տեղեկանալու օրվանից 3 աշխա-

տանքային օրվա ընթացքում՝ սերտիֆիկացման մարմին ներկայացնելով գրավոր կամ էլեկտրոնային դիմում-բողոք: Դիմում-բողոքում նշվում են բողոքարկվող որակավորման գնահատման արդյունքը, դիմում-բողոքի հիմքերը և ներկայացվող պահանջը:

55. Դիմում-բողոքը քննում է հանձնաժողովից անկախ ձևավորված բողոքարկման հանձնաժողովը: Բողոքարկման հանձնաժողովի կազմում չեն կարող ընդգրկվել տվյալ մասնակցի որակավորման գնահատումն իրականացրած կամ դրան մասնակցած անձինք:

56. Բողոքարկման հանձնաժողովը ձևավորվում է որակավորման գործընթացն իրականացնող սերտիֆիկացման մարմնի կողմից և բաղկացած է առնվազն 5 անդամից: Բողոքարկման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են սերտիֆիկացման մարմնի՝ որակավորման գնահատման գործընթացին չմասնակցած ներկայացուցիչներ և համապատասխան ոլորտի մասնագետներ:

57. Բողոքարկման հանձնաժողովի նախագահը և նախագահի տեղակալը ընտրվում են բողոքարկման հանձնաժողովի անդամներից: Բողոքարկման հանձնաժողովի նախագահի բացակայության կամ նրա կողմից իր լիազորությունների իրականացման անհնարինության դեպքում նրա լիազորություններն իրականացնում է նախագահի տեղակալը:

58. Բողոքարկման հանձնաժողովն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Բողոքարկման հանձնաժողովի որոշումն ընդունվում է նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ, իսկ ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է: Բողոքարկման հանձնաժողովի որոշումը պետք է պարունակի դիմում-բողոքի քննության արդյունքները, ընդունված որոշման հիմնավորումը և, անհրաժեշտության դեպքում, որակավորման գնահատման արդյունքի փոփոխության վերաբերյալ տվյալները:

59. Բողոքարկման հանձնաժողովի կողմից դիմում-բողոքը քննվում է այն ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում: Դիմում-բողոքի քննու-

թյան շրջանակներում բողոքարկման հանձնաժողովը ուսումնասիրում է դիմում-բողոքի հիմքերը, ինչպես նաև մասնագետի որակավորման գնահատմանն առնչվող փաստաթղթերը:

60. Դիմում-բողոքի քննության արդյունքում բողոքարկման հանձնաժողովը կարող է՝

1) դիմում-բողոքը բավարարել և փոփոխել մասնագետի որակավորման գնահատման արդյունքը, այդ թվում՝ վերանայել առանձին հարցերի գնահատականները.

2) ուղղել տեխնիկական կամ թվաբանական սխալը, եթե դրա ուղղումը չի հանգեցնում մասնագետի պատասխանների կամ գնահատման բովանդակության վերագնահատման.

3) դիմում-բողոքը մերժել և մասնագետի որակավորման գնահատման արդյունքը թողնել անփոփոխ:

61. Բողոքարկման հանձնաժողովի որոշումը դիմումատուին տրամադրվում կամ էլեկտրոնային եղանակով ուղարկվում է այն ընդունելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:

Ձև N 1

Դ Ի Մ ՈՒ Մ – Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

ԾԱԳՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Դիմող _____

(իրավաբանական անձի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը), ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը)

2. Իրավաբանական անձանց պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը

_____

3. Խնդրում եմ տրամադրել (US-1 ԱՊՀ, US-1 ՎՐԱՍՏԱՆ, US-3, Ա, EAV, ընդհանուր) ձևի ծագման հավաստագիր

_____

4. Ապրանքի ծագման հավաստագրի տրամադրման հիմքը՝

☐ նախկինում կազմված փորձաքննության ակտ

☐ սույն կարգով նախատեսված՝ առանց փորձաքննության հավաստագրի տրամադրման դեպք

5. Փորձաքննության ակտի համարը, ամսաթիվը (լրացվում է փորձաքննության ակտի հիման վրա հավաստագիր տրամադրելու դեպքում)։

---

6. Ապրանքի նախատեսվող արտահանման երկիրը

---

7. Ապրանքների ցանկ

Ապրանքի անվանումը	Ապրանքի ծածկագիրը	Չափի միավորը	Քանակը	Փաթեթավորման տեսակը	Տեղերի թիվը	Քաշը (նետտո/ բրուտտո)	Մեկ միավորի գինը	Ապրանքի արժեքը
1	2	3	4	5	6	7	8	9

Սույնով հայտարարում եմ, որ դիմում-հայտարարագրում ներկայացված տեղեկությունները և կից ներկայացված փաստաթղթերը հավաստի են, և պատասխանատվություն եմ կրում դրանց հավաստիության համար:

Պարտավորվում եմ տեղեկացնել ապրանքի ծագման որոշման վրա ազդող՝ ապրանքի արտադրության համար օգտագործվող հումքի, նյութերի, բաղադրիչների, արտադրական գործընթացի կամ այլ համապատասխան պայմանների փոփոխությունների մասին:

Խնդրում եմ ապրանքի ծագման հավաստագիրը տրամադրել՝

(տրամադրման եղանակը կամ էլեկտրոնային համակարգում տրամադրելու վերաբերյալ նշում)

Դիմող՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 2

Դ Ի Մ ՈՒ Մ – Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱԿՏԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Դիմող _____

(իրավաբանական անձի լրիվ անվանումը (անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը),

ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու հասցեն, հեռախոսահամարը, ֆաքսը)

2. Իրավաբանական անձանց պետական գրանցման համարը կամ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառման համարը

_____

3. Ապրանք ստացողի տվյալները _____

(անվանումը կամ անունը, ազգանունը, հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն)

4. Խնդրում եմ տրամադրել՝

☐ մշտական անվանացանկի համար կազմվող փորձաքննության ակտ

☐ առանձին խմբաքանակի համար կազմվող փորձաքննության ակտ

Ապրանքի ծագման հավաստագրի նախատեսվող ձևը՝
☐ US-1 ԱՊՀ ☐ US-1 Վրաստան ☐ US-3 ☐ «A» ☐ EAV ☐ ընդհանուր ☐ այլ՝ _____

5. Ապրանքի նախատեսվող արտահանման երկիրը

_____

6. Փորձաքննության իրականացման նպատակը կամ կիրառելի ծագման ռեժիմը

_____

(առկայության դեպքում՝ արտոնյալ կամ ոչ արտոնյալ ծագման որոշում, համապատասխան միջազգային պայմանագրով կամ այլ կիրառելի ակտով նախատեսված ծագման կանոն)

7. Ապրանքների ցանկ

Ապրանքի անվանումը	Ապրանքի ծածկագիրը	Չափի միավորը	Քանակը	Փաթեթավորման տեսակը	Տեղերի թիվը	Քաշը (նետտո/ բրուտտո)	Մեկ միավորի գինը	Ապրանքի արժեքը
1	2	3	4	5	6	7	8	9

Սույնով հայտարարում եմ, որ դիմում-հայտարարագրում ներկայացված տեղեկությունները և կից ներկայացված փաստաթղթերը հավաստի են, և պատասխանատվություն եմ կրում դրանց հավաստիության համար:

Պարտավորվում եմ տեղեկացնել սույն դիմում-հայտարարագրում ներկայացված ապրանքի ծագման որոշման վրա ազդող՝ ապրանքի արտադրության համար օգտագործվող հումքի, նյութերի, բաղադրիչների, արտադրական գործընթացի կամ այլ համապատասխան պայմանների փոփոխությունների մասին:

Կից ներկայացվող փաստաթղթեր՝

1. _____
2. _____
3. _____
4. _____
5. _____

Դիմող՝ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

_____ _____ 20 թ.

Ձև N 3

<table>
<tr><td colspan="3">1. Consignor (Exporter) (name of the country)</td><td colspan="3" rowspan="2">4. No._____

CERTIFICATE

OF ORIGIN OF GOODS
Issued by _____
(name of the country)
To be submitted to _____
(name of the country)</td></tr>
<tr><td colspan="3">2. Consignee (Importer) (name of the country and postal address)</td></tr>
<tr><td colspan="3">3. Means of transport and route (insofar as known)</td><td colspan="3">5. For official use _____
_____</td></tr>
<tr><td>6. Serial No.</td><td>7. Type, form, and quantity of packages</td><td>8. Description of goods</td><td>9. Weight (kg) (gross/net)</td><td colspan="2">10. Invoice number and date</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td colspan="2"></td></tr>
<tr><td colspan="3">11. Certification
It is hereby certified that the declaration of the applicant corresponds to the facts.
____ _____20 __

Seal

_____</td><td colspan="3">12. Declaration of the Applicant
The undersigned declares that the information provided above is true, that all the goods have been wholly produced or have undergone sufficient processing in
_____ ,
(name of the country)
and that all of them comply with the requirements established for the origin of such goods.</td></tr>
</table>

(signature)	____ _____20 __ Seal _____ (signature)

Ձև N 4

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

Ես՝ _____ -ս,
(անունը, հայրանունը, ազգանունը)

_____
(բնակության վայրը, հեռախոսահամարը)

_____
(անձնագրի տվյալները)

իմ սեփական հողատարածքում _____
(մարզը, գյուղը)

աճեցրել եմ_____
(ապրանքի անվանումը)

քանակությունը՝ _____, քաշը՝ _____
(տեղ) (բրուտտո, նետտո)

Արտահանվող երկիրը
_____

Տրանսպորտային միջոցը _____

Ներկայացված տեղեկատվության համար կրում եմ պատասխանատվություն:

_____
(անունը, ազգանունը, ստորագրությունը)

Ձև N 5

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ա Գ Ի Ր

_____
(կազմակերպության անվանումը)

ձեռք է բերել _____
(ապրանքի անվանումը)

ածեցված՝ _____
(մարզը, գյուղը)

արտահանելու համար _____ քանակությունը՝ _____
(երկիրը) (տեղ)

քաշը՝
_____:
(բրուտտո, նետտո)

Կից ներկայացնում եմ՝

↵ ձեռքբերման փաստաթղթերը.
↵ ձեռքբերման փաստաթղթերը պահպանվում են _____ հասցեում: Անհրաժեշտության դեպքում պարտավորվում եմ տրամադրել:

Ներկայացված տեղեկատվության համար կրում եմ պատասխանատվություն:

Տնօրեն՝ _____ _____
(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Նշված ապրանքների արտադրության ընթացքում ծագումը որոշելու վավերապայմանները համապատասխանում են N փորձաքննության ակտի կազմման համար ներկայացված պայմաններին, և վավերապայմաններում փոփոխություն տեղի չի ունեցել:

Ներկայացված տեղեկատվության համար կրում եմ պատասխանատվություն:

Տնօրեն՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 6

Դ Ի Մ ՈՒ Մ

Խնդրում եմ Ձեզ թույլատրել մասնակցելու _____

_____

(նշվում է համապատասխան մասնագիտական ուղղությունը)_____

_____

որակավորման քննությանը:

Կից ներկայացնում եմ՝

ա) անձնագրի պատճենը,

բ) մեկ լուսանկար (3 x 4 սմ չափսի),

գ) հավատարմագրված անձանց սերտիֆիկացման մարմնի հետ կնքված պայմանագիրը:

Ծանոթացել եմ՝

ա) «Ապրանքի ծագման հավաստագրերի տրամադրման և փորձաքննության անցկացման կարգը, փորձաքննության մարմիններին ներկայացվող պահանջները և փորձագետների որակավորման ու քննության անցկացման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 20-- թվականի -- N -ն որոշմանը,

բ) որակավորման քննության անցկացման համակարգչային միջոցներից օգտվելու կանոններին:

Տեղեկացված եմ այն մասին, որ որակավորման քննությունն անցկացվելու է հավատարմագրված անձանց սերտիֆիկացման մարմնում:

Հայտնում եմ, որ դատական վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված չեմ:

Դիմորդ՝ _____ _____

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Ձև N 7 «Ə»

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԱԿՏ

Փորձաքննության ակտ N _____

արտահանվող ապրանքի ծագման և ծածկագրի վերաբերյալ

1. Կազմման տարեթիվը _____ 2. Կազմման վայրը _____
3. Ակտը կազմված է փորձագետ(ներ) _____ կողմից:
4. Փորձաքննությունն անցկացվել է ներկայացուցիչների մասնակցությամբ

Կազմակերպությունը	Պաշտոնը	Անունը, հայրանունը, ազգանունը

5. Հիմք՝ կարգագիր N _____ ____ _____20 թ.
6. Փորձաքննության ներկայացված է_____
ապրանքի քանակը _____
(ապրանքատեղերի թիվը, տարայի տեսակը)
որից՝

Ըստ ապրանքային անվանման	Չափման միավորը	Քանակը		Փաթեթավորման և պիտակավորման նկարագիրը	Քաշը (կգ)	
					բրուտտո	նետտո

7. Փորձաքննության խնդիրը_____

8. Մատակարար _____
(անվանումը (անունը, ազգանունը) և փոստային հասցեն)
9. Արտադրող_____
10. Պայմանագիր N _____
11. Ստացող_____
(անվանումը (անունը, ազգանունը) և փոստային հասցեն)
_____

12. Հաշիվ-ապրանքագրի համարը և տարեթիվը _____
13. Տրանսպորտային միջոցը և երթուղին (որքանով այն հայտնի է) _____
_____

14. Տեղեկություններ հումքի, կիսապատրաստվածքի, նյութի վերաբերյալ
_____
(անվանումը, բաղադրությունը, ապրանքատեսակը, ստացման հիմնավորումը)
_____

15. Հանրապետությունում կատարված հիմնական տեխնոլոգիական պրոցեսները, որոնք ապրանքին տալիս են ծագման կարգավիճակ _____
_____

16. Ստուգման արդյունքները_____
_____
_____
_____
_____

17. Փորձագետի եզրակացությունը
Շարադրվածի հիման վրա հավաստում եմ, որ սույն ակտի 14-րդ կետում նշված ապրանքը (ները) ունեն Հայաստանի Հանրապետության իսկական ծագում
_____

Ապրանքի փորձաքննության սկիզբը
_____

Ապրանքի փորձաքննության ավարտը
_____

Փորձագետ _____

Ներկայացուցիչներ _____

_____
_____

_____

Ակտը գրանցված է _____ _____ ____ 20 թ.

Կ. Տ.

Ակտն առանց կնիքի անվավեր է
Սույն ակտը _____ օրինակով ստացել է ___ _____ ____ 20 թ.

_____
(ստորագրությունը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

30.10.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ